



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, [araqs.hamaynq@gmail.com](mailto:araqs.hamaynq@gmail.com), հեռ.՝ (093)554477

### ՈՐՈՇՈՒՄ

13 սեպտեմբերի 2022 թվական N 687-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022թՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N 385-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի 2022 թվականի հունիսի 17-ի «Ազատ Լենդրուշի Պողոսյանի կողմից կառուցված ինքնակամ շինությունը օրինականացնելու մասին» N385-Ա որոշման 1-ին կետով կատարել հետևյալ փոփոխությունը.

«Ապագա գյուղի բնակիչ Ազատ Պողոսյանին» բառերը փոխարինել «Ապագա գյուղի բնակիչ Ազատ Պողոսյանին», Մարան Միքայելի Բաղդասարյանին և Արտեն Ազատ Պողոսյանին»» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Հ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի սեպտեմբերի 13  
Արաքս համայնք



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, araqx.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

### ՈՐՈՇՈՒՄ 13 սեպտեմբերի 2022 թվականի N 686-Ա

**ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ-  
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԸՑԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ  
ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ  
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի 384-Ա  
ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐԵՐԱԾ ՏԱՆԱՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա  
գյուղի բնակիչ Ազատ Լենդրուշի Պողոսյանը /ծնվ.1967թ./ դիմել է Արաքսի  
համայնքապետարան՝ Ապագա գյուղի 6-րդ փողոցի 14 հասցեում գտնվող, իրենց  
պատկանող /ըստ օրենքի ժառանգության վկայագրի՝ 2022թ-ի թիվ 2812 և թիվ 2813  
սեղանամատյանի/ 0.20հա օրինական հողամասին կից ավել օգտագործվող 0.0073  
հա հողամասի և բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-  
շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով:

Նեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական  
ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի  
1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված  
անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005  
թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով,  
Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի  
N1328-Ն որոշմամբ: Հաշվի առնելով, որ բնակելի տունը և օժանդակ շենք-  
շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թ., հողամասը  
ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ  
հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում:

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Վերականգնել Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա գյուղի 6-րդ փողոցի 14  
հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Ազատ Լենդրուշի Պողոսյանի  
/ծնվ.1967թ/, Մարան Միքայելի Բաղդասարյանի /ծնվ.1970թ./, Արսեն Ազատի

Պողոսյանի /ծնվ.1991թ./ գույքային իրավունքները՝ ճանաչել նրանց սեփականության իրավունքը 0.20հա օրինական հողամասին կից ավել օգտագործվող 0.0073հա հողամասի և բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինուայիլների նկատմամբ՝ /բնակելի տուն՝ 49.1քմ կառուցված 1965թ, բնակելի տուն՝ 4.3քմ կառուցված 1965թ., բնակելի տուն՝ 63.8քմ կառուցված 1965թ, բնակելի տուն՝ 25.7քմ կառուցված 1965թ, անասնաշենք՝ 13.5քմ կառուցված 1965թ., թունրատուն՝ 10.4քմ կառուցված 1965թ, թունրատուն՝ 11.1քմ կառուցված 1965թ/։ Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուս:

2. Շենք-շինուայիլների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան դրակավորում ստացած անձի կողմից:

3. Առաջարկել «ՀԱ ԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Ազատ Լենդրուշի Պողոսյանի /ծնվ.1967թ/, Մարան Միքայելի Բաղդասարյանի /ծնվ.1970թ./, Արտեն Ազատի Պողոսյանի /ծնվ.1991թ./ սեփականության իրավունքները սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինուայիլների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի գրանցման վկայական:

4. Բնակելի տանը տալ Հայաստանի Հանրապետություն, Արարս համայնք, գյուղ Ապագա 6-րդ փողոց թիվ 14 հասցեն:

5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արարս համայնքի ղեկավարի 2022 թվականի հունիսի 17-ի «Բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինուայիլների նկատմամբ գույքային իրավունքները վերականգնելու մասին» N384-Ա որոշումը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի սեպտեմբերի 13  
Արարս համայնք



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ախաշատրյան 1, [araqs.hamaynq@gmail.com](mailto:araqs.hamaynq@gmail.com), հեռ.՝ (093)554477

### ՈՐՈՇՈՒՄ

12 սեպտեմբեր 2022 թվականի N 685-Ա

### ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի վարչական տարածքում գտնվող Վոլոսյա Մելքոնյանին սեփականության իրավունքով պատկանող 04-050-0014-0001 կաղաստրային ծածկագրով բնակելի տանը տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արաքս համայնք, գյուղ Խորոնք, Ա. Մանուկյան փողոց, 1-ին փակուղի 1 հասցե:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



*Դ. ՂԱԶԱՐՅԱՆ*

2022 թվականի սեպտեմբեր 12

Արաքս համայնք



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ  
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, [araqs.hamaynq@gmail.com](mailto:araqs.hamaynq@gmail.com), հեռ.՝ (093)554477

**ՈՐՈՇՈՒՄ**

12 սեպտեմբերի 2022 թվականի N 684-Ա

**ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ  
ՃԱՆԱՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասով, իիմբ ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս գյուղի բնակիչ Յուրիկ Վաղինակի Մելոյանի 2022 թվականի սեպտեմբերի 8-ի դիմումը.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս գյուղի բնակիչ Յուրիկ Վաղինակի Մելոյանին /ծնվ. 1963թ/ սեփականության իրավունքով պատկանող 04-017-0133-0006 կադաստրային ծածկագրով 0.5 հա վարելահողին կից նրա կողմից փաստացի ավել օգտագործվող 0.0602 հա վարելահողը ճանաչել Յուրիկ Վաղինակի Մելոյանի /ծնվ. 1963թ/ սեփականություն:
2. Գյուղատնտեսական նշանակության 0.5 հա վարելահողին կից, ի սկզբանե նրանց կողմից փաստացի ավել օգտագործվող, 0.0602 հա վարելահողը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում:
3. Սույն որոշումը ուժի մեջ մտնում ընդունման պահից;

**ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**



**Դ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2022 թվականի սեպտեմբերի 12  
Արաքս համայնք



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ  
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, [araqs.hamaynq@gmail.com](mailto:araqs.hamaynq@gmail.com), հեռ.՝ (093)554477

**ՈՐՈՇՈՒՄ**

12 սեպտեմբերի 2022 թվականի N 683-Ա

**ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԵԱՅԻՆ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս գյուղի բնակիչ Յուրիկ Վաղինակի Մելյանը /ծնվ. 1963թ./ դիմել է Արաքսի համայնքապետարան՝ Արաքս գյուղի L. Թումանյան փողոցի թիվ 3 հասցեում գտնվող, իրեն պատկանող /ըստ օրենքի ժառանգության վկայագրի՝ 2022թ-ի թիվ 6147, թիվ 6148 սեղանամատյանի/ 0.12հա օրինական հողամասին կից ավել օգտագործվող 0.024հա հողամասի և օժանդակ շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով:

Նեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով, «Իրավունք հաստատող փաստաթուղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N1328-Ն որոշմամբ: Հաշվի առնելով, որ բնակելի տունը և օժանդակ շենք-շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թ., հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում:

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

- Վերականգնել Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս գյուղի L. Թումանյան փողոցի թիվ 3 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Յուրիկ Վաղինակի Մելյանի /ծնվ. 1963թ./ գույքային իրավունքները՝ ճանաչել նրա սեփականության իրավունքը 0.12հա օրինական հողամասին կից ավել օգտագործվող 0.024 հա հողամասի և օժանդակ շենք-շինությունների նկատմամբ՝ / ջերմոց՝ 382.2քմ կառուցված 1991թ./: Կառուցները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտոս:

2. Շենք-շինությունների մակերեսները ենթական են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:
3. Սուածարկել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Յուրիկ Վաղինակի Մելոյանի /ծնվ.1963թ// սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի գրանցման վկայական:
4. Տնամերծ հողամասին տալ Հայաստանի Հանրապետություն, Արարս համայնք, գյուղ Արարս, Հ. Թումանյան փողոց 3 հասցեն:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՐՍ ՀԱՅԱՅԻ ԴԵԿԱՎԱՐ՝



Դ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի սեպտեմբերի 12  
Արարս համայնք



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ահսաշատրյան 1, [araqss.hamaynq@gmail.com](mailto:araqss.hamaynq@gmail.com), հեռ.՝ (093)554477

### ՈՐՈՇՈՒՄ

12 սեպտեմբեր 2022 թվականի N 682-Ա

### ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ձրառատ գյուղի վարչական տարածքում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 04-085-0092-0025 կադաստրային ծածկագրով հողամասին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արաքս համայնք, գյուղ Ձրառատ, Ուղեկալների փողոց, 3-րդ նրբանցք, 1/2 հասցե:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Դ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի սեպտեմբեր 12

Արաքս համայնք



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ախաչատրյան 1, [araqs.hamaynq@gmail.com](mailto:araqs.hamaynq@gmail.com), հեռ.՝ (093)554477

### ՈՐՈՇՈՒՄ

12 սեպտեմբեր 2022 թվականի N 681-Ա

### ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ձրառատ գյուղի վարչական տարածքում գտնվող Գեղամ Սերյոժայի Առաջեցնակին սեփականության իրավունքով պատկանող 04-085-0067-0022 կաղաստրային ծածկագրով բնակելի տանը տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արաքս համայնք, գյուղ Ձրառատ, Հ. Մկրտչյան փողոց, 1-ին նրբանցք, 4 հասցե:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կաղաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



 Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի սեպտեմբեր 12

Արաքս համայնք



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ախաչատրյան 1, [agac5.hamayno@gmail.com](mailto:agac5.hamayno@gmail.com), հեռ.՝ (093)554477

### ՈՐՈՇՈՒՄ

12 սեպտեմբեր 2022 թվականի N 680-Ա

### ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ձրարի գյուղի վարչական տարածքում գտնվող Զարուի Երվանդի Բաղրամարյանին պատկանող 04-086-0007-0022 ծածկագրով բնակելի տանը տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արաքս համայնք, գյուղ Ձրարի, Խ. Արովյան փողոց, 9-րդ փակուլի, 2 շենք, 2 բնակարան հասցե:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Հ ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի սեպտեմբեր 12

Արաքս համայնք



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ախաչատրյան 1, [araqs.hamayno@gmail.com](mailto:araqs.hamayno@gmail.com), հեռ՝ (093)554477

## ՈՐՈՇՈՒՄ

12 սեպտեմբեր 2022 թվականի N 679-Ա

### ՀԱՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արտիմետ գյուղի վարչական տարածքում գտնվող Խորեն Տերտերյանին սեփականության իրավունքով պատկանող 04-023-0015-0014 կադաստրային ծածկագրով տևամերձ հողամասին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արաքս համայնք, գյուղ Արտիմետ, Մ. Հերացու փողոց 37 հասել:
- Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ



2022 թվականի սեպտեմբեր 12

Արաքս համայնք



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ալևաշատորյան 1, [araqs.hamaynq@gmail.com](mailto:araqs.hamaynq@gmail.com), հեռ.՝ (093)554477

**ՈՐՈՇՈՒՄ**

12 սեպտեմբեր 2022 թվականի N 678-Ա

**ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Զրարբի գյուղի վարչական տարածքում գտնվող Արթուր Նորայրի Գևորգյանին պատկանող 04-086-0007-0026 ծածկագրով բնակելի տանը տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արաքս համայնք, գյուղ Զրարբի, Խ. Աբովյան փողոց, 7-րդ փակուլի, 4 շենք, 2 բնակարան հասցե:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Դ. ՂԱԶԱՐՅԱՆ**



2022 թվականի սեպտեմբեր 12

Արաքս համայնք



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրացք համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, [araqss.hamayno@gmail.com](mailto:araqss.hamayno@gmail.com), հեռ.՝ (093)554477

### ՈՐՈՇՈՒՄ

12 սեպտեմբեր 2022 թվականի N 677-Ա

#### ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՋՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱԿՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ գլխի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի ու Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 29.08.2006թ. թիվ 13-Ն հրամանի պահանջներով և հիմք ընդունելով 12.09.2022թ.-ի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքապետարանի աշխատակազմի մրցութային հանձնաժողովի ծկավորման նպատակով հատուկ ծրագրով ընտրված հանձնաժողովի անդամների ցանկը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի կազմը, համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Սահմանել, որ համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթը անցկացվում է ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից հաստատված կարգի համաձայն:

3. Հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկման իրականացման համար լիազորված անձ ճանաչել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Մարիա Ազատյանին, որը պարտավորվում է մասնակիցներին բացատրել թեստավորման անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը, արձանագրել և հանձնաժողովի անդամների հետ միասին ստորագրել նիստերի արձանագրությունները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի սեպտեմբերի 12

Արարս համայնք

ՀԱՎԵԼՎԱԾ

Հաստատված է ՀՀ Արմավիրի մարզի

Արարս համայնքի ղեկավարի

12 սեպտեմբեր 2022թ.-ի

N 677-Ա որոշմամբ

ԿԱԶՄ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արարս համայնքապետարանի  
աշխատակազմում համայնքային ծառայության թափուր պաշտոնները գրադարձնելու համար  
մրցութային հանձնաժողովի

Հաջանուն, անուն	Զբաղեցրած պաշտոնը	Որ կազմակերպությունն է ներկայացնում
1 Լիլիթ Նորիկի Մուշեղյան	ՀՀ Արմավիրի մարզպետարանի զարգացման ծրագրերի, գրոսաշրջության և վերլուծության բաժնի պետ	ՀՀ Արմավիրի մարզպետարան
2 Արշակ Ռեաֆիկի Ղորլանյան	ՀՀ Արմավիրի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի զինավոր մասնագետ:	ՀՀ Արմավիրի մարզպետարան
3 Դագար Նշանի Դագարյան	Արարս համայնքի ղեկավար	Արարսի համայնքապետարան
4 Պետրոս Արամայիսի Ավագյան	Արարս համայնքի ղեկավարի տեղակալ	Արարսի համայնքապետարան

5	Մարյամ Ռեաֆիկի Մակարյան	Արարս համայնքի ավագանու անդամ	Արարս համայնքի ավագանի
6	Գասպար Շահենի Եղիազարյան	Արարս համայնքի Մեծամոր գյուղի դպրոցի տնօրեն	Գյուղական և ուսումնական հաստատության ներկայացուցիչ

ԱՐԱՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2022 թվականի սեպտեմբերի 12

Արարս համայնք

Դ. ՂԱԶԱՐՅԱՆ





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, [araqs.hamaynq@gmail.com](mailto:araqs.hamaynq@gmail.com), հեռ.՝ (093)554477

### ՈՐՈՇՈՒՄ 09 սեպտեմբերի 2022 թվականի N 676-Ա

#### ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ- ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԵԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղի ընակիչ Նիզյար Զամալի Գալոյանը /ծնվ. 1963թ./ դիմել է Արաքսի համայնքապետարան՝ Գայ գյուղի Երևանյան 7-րդ փողոցի 3 հասցեում գտնվող, իրենց պատկանող /ըստ օրենքի ժառանգության վկայագրի՝ 2021թ.-ի թիվ 8489 սեղանամատյանի/ 0.12 հա օրինական հողամասին կից ավել օգտագործվող 0.0163հա հողամասի և բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթյութերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ղեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N1328-Ն որոշմամբ: Հաշվի առնելով, որ բնակելի տունը և օժանդակ շենք-շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թ., հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում:

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Վերականգնել Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղի Երևանյան 7-րդ փողոցի 3 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Նիզյար Զամալի Գալոյանի /ծնվ. 1963թ./, Արմինե Ազիզի Գալոյանի /1990թ./, Զարիֆ Ազիզի Գալոյանի /ծնվ. 1991թ./ գույքային իրավունքները՝ ճանաչել նրանց սեփականության իրավունքը 0.12հա օրինական հողամասին կից ավել օգտագործվող 0.0163հա հողամասի և բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ՝ /բնակելի տուն՝ 148.80քմ կառուցված 1973թ, ծածկած մուտք՝ 48.60քմ կառուցված

1973թ, աստիճանահարթակ՝ 13.50քմ կառուցված 1973թ, բնակելի տուն՝ 114.80քմ կառուցված 1973թ., բաց պատշգամբ՝ 93.40քմ կառուցված 1973թ/: Կառուցները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

2. Շենք-շինությունների մակերեսները ենթական են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3. Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Նիգյար Զամալի Գալոյանը /ծնվ. 1963թ Նիգյար Զամալի Գալոյանի /ծնվ. 1963թ/, Արմինե Ազիզի Գալոյանի /1990թ/, Զարիֆ Ազիզի Գալոյանի /ծնվ. 1991թ./ սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի գրանցման վկայական:

4. Բնակելի տանը տալ Հայաստանի Հանրապետություն, Արարս համայնք, գյուղ Գայ Երևանյան 7-րդ փողոց թիվ 3 հասցեն:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՐՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի սեպտեմբերի 9  
Արարս համայնք



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք  
 ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, [araqs.hamaynq@gmail.com](mailto:araqs.hamaynq@gmail.com), հեռ.՝ (093)554477

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 սեպտեմբերի 2022 թվականի N 675-Ա

### ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, իհմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի N 10-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետը և Ա/Զ Արման Խաչատրյանի դիմումը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլատրել Ա/Զ Արման Խաչատրյանին Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս գյուղի վարչական տարածքում 2022 թվականի 2-րդ եռամսյակին վաճառել ոգելից խմիչքներ և ծխախոտային արտադրատեսակներ:
2. Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի վարչական տարածքում 2022 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույթաչափեր սահմանելու մասին» N 10-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի համաձայն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի սեպտեմբեր 09  
 Արաքս համայնք



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, [araqs.hamaynq@gmail.com](mailto:araqs.hamaynq@gmail.com), հեռ.՝ (093)554477

### ՈՐՈՇՈՒՄ

09 սեպտեմբերի 2022 թվականի N 674-Ա

#### ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ՇԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի N 10-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետը և Ա/Զ Լիլիթ Մարկոսյանի դիմումը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Թույլատրել Ա/Զ Լիլիթ Մարկոսյանին Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս գյուղի վարչական տարածքում 2022 թվականի 2-րդ և 3-րդ եռամյակներին վաճառել ոգելից խմիչքներ և ծխախոտային արտադրատեսակներ:
- Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի վարչական տարածքում 2022 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին» N 10-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի համաձայն:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ԱՐԱՔԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Դ. ՂԱԶԱՐՅԱՆ**



2022 թվականի սեպտեմբեր 09  
Արաքս համայնք



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, [araqs.hamaynq@gmail.com](mailto:araqs.hamaynq@gmail.com), հեռ.՝ (093)554477

### ՈՐՈՇՈՒՄ

09 սեպտեմբերի 2022 թվական N 673-Ա

### ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՍԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, իհմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի N 10-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 12-րդ ենթակետը և Ա/Զ Գոռ Գրիգորյանի դիմումը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Թույլատրել Ա/Զ Գոռ Գրիգորյանին Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արտիմետ գյուղի վարչական տարածքում 2022 թվականի 3-րդ եսամյակին կազմակերպել և իրացնել հանրային սնունդ:
- Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի վարչական տարածքում 2022 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքավակեր սահմանելու մասին» N 10-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 12-րդ ենթակետի համաձայն:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Դ. ՂԱԶԱՐՅԱՆ



2022 թվականի սեպտեմբեր 09  
Արաքս համայնք



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԲՈՒՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք  
 ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա.Խաչատրյան 1, araqsh.amaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

### ՈՐՈՇՈՒՄ

09 սեպտեմբերի 2022 թվականի N 672-Ա

### ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի N 10-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետը և Ա/Զ Նախրա Մկրտչյանի դիմումը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Թույլատրել Ա/Զ Նախրա Մկրտչյանին Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արտիմետ գյուղի վարչական տարածքում 2022 թվականի 3-րդ եռամյակին վաճառել ոգելից խմիչքներ և ծխախոտային արտադրատեսակներ:
- Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի վարչական տարածքում 2022 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին» N 10-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի համաձայն:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱԲՈՒՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



Դ ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի սեպտեմբեր 09  
 Արաքս համայնք



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, araq.s.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

**ՈՐՈՇՈՒՄ**  
09 սեպտեմբերի 2022 թվականի N 671-Ա

**ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌԻ  
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի N 10-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետը և  
Ա/Ձ Հրաչիկ Միրզախանյանի դիմումը,

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Թույլատրել Ա/Ձ Հրաչիկ Միրզախանյանին Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արտիմետ գյուղի վարչական տարածքում 2022 թվականի 3-րդ եռամյակին վաճառել ոգելից խմիչքներ և ծխախոտային արտադրատեսակներ:
2. Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի վարչական տարածքում 2022 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույթաչափեր սահմանելու մասին» N 10-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի համաձայն;
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**



**Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2022 թվականի սեպտեմբեր 09  
Արաքս համայնք



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, [araqs.hamaynq@gmail.com](mailto:araqs.hamaynq@gmail.com), հեռ.՝ (093)554477

### ՈՐՈՇՈՒՄ

09 սեպտեմբերի 2022 թվականի N 670-Ա

#### ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, իհմը ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի N 10-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետը և Ա/Զ Մարիամ Բալաբանյանի դիմումը,

#### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Շույլատրել Ա/Զ Մարիամ Բալաբանյանին Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արտիմետ գյուղի վարչական տարածքում 2022 թվականի 3-րդ եռամսյակին վաճառել ոգելից խմիչքներ և ծխախոտային արտադրատեսակներ:
2. Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի վարչական տարածքում 2022 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին» N 10-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի համաձայն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի սեպտեմբեր 09  
Արաքս համայնք



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԲՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արածո համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, araq.s.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 սեպտեմբերի 2022 թվականի N 669-Ա

### ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌԵՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, իհմը ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արածո համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի N 10-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետը և Ա/Զ Մարիամ Բալաբանյանի դիմումը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Թույլատրել Ա/Զ Մարիամ Բալաբանյանին Արմավիրի մարզի Արածո համայնքի Արտիմետ գյուղի վարչական տարածքում 2022 թվականի 3-րդ եռամսյակին վաճառել ոգելից խմիչքներ և ծխախոտային արտադրատեսակներ:
- Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արածո համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արածո համայնքի վարչական տարածքում 2022 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույթափեր սահմանելու մասին» N 10-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի համաձայն;
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱԲՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Դ ՂԱԶԱՐՅԱՆ



2022 թվականի սեպտեմբեր 09  
Արածո համայնք



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա.Խաչատրյան 1, [araqs.hamaynq@gmail.com](mailto:araqs.hamaynq@gmail.com), հեռ.՝ (093)554477

### ՈՐՈՇՈՒՄ

09 սեպտեմբեր 2022 թվականի N 668-Ա

#### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականների՝ N 06072016-04-0037 տրված 06 հուլիս 2016 թվականին և N 08082022-04-0094 տրված 08 օգոստոս 2022 թվականին և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04013LESYLBQ.

#### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղի վարչական տարածքում գտնվող Ժիրայր Սիրեկանի Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող 04-013-0041-0016 և 04-013-0041-0015 ծածկագրերով տնամերձ հողամասերի միավորումից տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արաքս համայնք, գյուղ Առատաշեն, Մ. Մաշտոցի 10/5 հասցե:
- Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար;
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



#### Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի սեպտեմբեր 09

Արաքս համայնք



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, [araqs.hamaynq@gmail.com](mailto:araqs.hamaynq@gmail.com), հեռ.՝ (093)554477

### ՈՐՈՇՈՒՄ

09 սեպտեմբերի 2022 թվական N 667-Ա

### **ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, իիմբ ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի N 10-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետը և Ա/Զ Զոնիկ Առուժանյանի դիմումը,

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Շուպլատրել Ա/Զ Զոնիկ Առուժանյանին Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղի վարչական տարածքում 2022 թվականի 3-րդ եռամյակին վաճառել ոգելից խմիչքներ:
2. Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի վարչական տարածքում 2022 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույցաշափեր սահմանելու մասին» N 10-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի համաձայն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**



**Ղ ՂԱԶԱՐՅԱՆ**

2022 թվականի սեպտեմբեր 09  
Արաքս համայնք



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ախաչատորյան 1, [araqs.hamaynq@gmail.com](mailto:araqs.hamaynq@gmail.com), հեռ՝ (093)554477

### ՈՐՈՇՈՒՄ

09 սեպտեմբեր 2022 թվականի N 666-Ա

**ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 18 ՀԱՆԳՈՒՅՅԱԼԻ ԸՆՏԱՆԻՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 03-ի N39 որոշումը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Արաքս համայնքի 2022 թվականի բյուջեի սոցիալական ֆոնդի միջոցներից 900,000 /իննը հարյուր հազար / ՀՀ դրամ Արաքս համայնքի թվով 18 /տասնութե հանգույցայի ընտանիքի ֆինանսական աջակցություն տրամադրել՝ համաձայն կից ցուցակի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**



2022 թվականի սեպտեմբեր

Արաքս համայնք

## ՑՈՒՑԱԿ

**ԱՐԱԲՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 18 ՀԱՆԳՈՒՅՅԱԼԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՐԱԲՍ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 09-Ի N 666 -Ա ՈՐՈՇՈՒՄՈՎ  
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N	Ազգանուն,անուն,հայրանուն	Հասցե	Անձը հաստատող փաստաթույր	Գումար ՀՀ դրամ
1.	Սուլբարյան Կարինե Ժորայի	Գ.Արտիմիս	AR0230162	50.000
2.	Ռումոյան Աննա Ազատի	Գ.Ապագա	AT0327292	50.000
3.	Ավդոյան Դերենիկ Թոոռնի	Գ.Մեծամոր	Խ/Պ006885081	50.000
4.	Աղամիրյան Հակոբ Ավետիսի	Գ.Մեծամոր	AN0641513	50.000
5.	Պապեյան Գագիկ Նորիկի	Գ.Գայ	AR0629471	50.000
6.	Մովսիսյան Գառնիկ Աղվանի	Գ.Արտիմիս	Խ/Պ012610762	50.000
7.	Մկրտչյան Մուշեղ Արայիկի	Գ.Ապագա	Խ/Պ007659410	50.000
8.	Հայրապետյան Գայանե Աբրահամի	Գ.Ջրառատ	AU0634745	50.000
9.	Սերոբյան Ռազմիկ Սահակի	Գ.Ջրառատ	Խ/Պ004582839	50.000
10.	Ղազարյան Սպարտակ Նորիկի	Գ.Հայկաշեն	AP0522807	50.000
11.	Դավթյան Ասյա Ժորայի	Գ.Արտիմիս	Խ/Պ001933159	50.000
12.	Ղազարյան Սամվել Մխիթարյ	Գ.Առատաշեն	AT0364045	50.000
13.	Մելքոնյան Մուշեղ Արշալույսի	Գ.Առատաշեն	AS0457457	50.000
14.	Պողոսյան Զարուհի Աշոտի	Գ.Ջրարբի	Խ/Պ002091130	50.000
15.	Թամոյան Հովհաննես Ալիխանի	Գ.Ջրառատ	Խ/Պ014268429	50.000
16.	Մկրտչյան Աստղիկ Պարզեկի	Գ.Գայ	AV0272611	50.000
17.	Մինասյան Պետրոս Լավրենտի	Գ.Մեծամոր	AU0259596	50.000
18.	Արույան Ռուզաննա Ռաֆիկի	Գ.Ջրարբի	AR0581094	50.000
				900.000

Աշխատակազմի քարտուղար՝

Վ.Վարդանյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

այստեղի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք  
Հ. Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, [araqs.hamaynq@gmail.com](mailto:araqs.hamaynq@gmail.com), հեռ.՝ (093)554477

**ՈՐՈՇՈՒՄ**

09 սեպտեմբերի 2022 թվական N 665-Ա

**ՍԱՐԳԻՍ ԳԱՐԵԳԻՆԻ ՆԱՀԱՊԵՏՅԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ԴԱՍԻ ԱՌԱՋԱՏԱՐ  
ԾԱՌԱՅՈՒՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻճԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 8-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով, 2-րդ և 3.2-րդ մասերով, իհմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի 2022 թվականի օգոստոսի 8-ի N 103-Ա որոշումը, փորձաշրջանի ընթացքում հանձնարարված աշխատանքների արդյունավետ և որակյալ կատարումը.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

